լինի. վասն զի բազում տեսութիւն ունի նորա նստելն ի այդ երկիրն. զոր Տէր Յիսուս օգնեսցէ նմա իւր կարողութեամբն: Եւ Քրիստոսի մարդասիրին փառք յաւիտեանս. ամէն:

(Աղաչեմ զամենեսեան վասն խորտակեալ եղջերիս նորոգելոյ աղաչել զՏէր. – Ձծոյլս ի բարիս և զարագս ի չարիս, զմեղսամերկ և զթշուառա-կանս և զանվարժս, աղաչեմ յիշել ի Տէր. բայց վասն գրին անմեղադիր լերուք վասն Աստուծոյ, զի թանաքս ոչ էր բարի):

Եւ որպէս գրեալ կայ յառաջագոյն ի գրիս այսմիկ՝ զհալածումն և զնե-ղութիւն և զաւերումն ողորմելի Հայ ազգիս մերում, եթէ որպէս բռնու-թեամբ ուրացուցին և հաւատոյ հանեին, և զեկեղեցիքն քանդեցին ի հիմա-նէ, և զամենայն սպասք և զանօթք եկեղեցոյ ափշտակեցին. զոր այդ պեղծ անօրէն Աղեքչանտրին հրամանաւն գործեցին զայս չափ ինչ, զոր ոչ կարեմ (ընդ) գրով արկանել այժմ զնոցա ամբարշտութիւն և զանօրէնութիւն: Զոր մարդասէրն և բարեգութն Աստուած յարոյց ի վերայ նոցա զայս արագահաս պատուհասն, որ երկոտասան աւուր մէջն կորեան և անյայտ եղեն իբրև զծուխ հրոյ. և թէպէտ փոքր մի ժամանակ բարձրացան այդ անօրէնքն իբրև զմայրսն Լիբանանու, այլ իբրև զփոշի անցան. զոր տարաւ մրրիկ հողմոյ: Վասն որոյ գոհութիւն և փառք Աստուծոյ: Բայց Լուսաւորչին ողորմելի ազգն փոքր ի շատէ մխիթարեցան Աստուծոյ ողորմութեամբն՝ զոր ետ նոցա Տէր Աս-տուած զայս ինչ մխիթարութիւն, զոր տեսին իւրեանց թշնամիքն ցրուեալք և փախստականք, և տուն նոցա կործանեալ: Եւ զի հրամանաւն Աստուծոյ այս բարեպաշտ Տեսքոթն հաստատեցաւ իւր իշխանութիւնն ի վերայ եր-կրին այնմիկ. և զՀայ ազգն դարձոյց, և շնորհեաց նոցա զիւրեանց օրէնքն, որ Հայոց օրինօքն լինին համարձակ. և ոչ ոք նոցա բան չխօսէ և կամ դա-տէ. ով ոք զՀայ ազգն դատէ և կամ նախատէ վասն օրինացն, նայ [1]... գլխով պատժեն:

1562 Հայոց թվ. ՌԺ. Իլովլի արհի եպիսկոպոսն Գժէօնց Թարլոյ եկաւ ի Կամենից. և մեք Հայոց քահանայքս գնացաք ի մօտն՝ ընծայիւք. և քան զչափն աւելի ընդունեց զմեզ:

Եւ ապա եկն մեր արհի եպիսկոպոսն Տէր Գրիգոր ի Կամենիցս, որ է աթոռակալ ամենայն Հայոց, որչափ մեն է Նեմեչի երկիր: (Ամենայն Հայոց մերազգեաց ոք ի Գերմանիա):

1562 Հայոց թվ. ՌԺ. Նոյեմբ. ԺԳ. փառք Աստուծոյ Հօր անմահի, և Որդւոյն Աստուծոյ Միածնի, և Ս. Հոգոյն Աստուծոյ ճշմարտի:

1562 թվ. ՌԺԱ. Սարգիս տամղաճին առ Աստուած փոխեցաւ, Աստուած ջնջէ զիւր մեղքն զոր գործեալ է կամաւ և ակամայ: — Եւ ի նոյն ամին պարոն Գուկալ պէկն ի Աստուած փոխեցաւ. և ի նոյն ամին զորդին իւր

1. Բառ մի կամ երկու պակաս պատճառաւ թղթին պատառման. թերեւս ըլլայ [illegible]: